



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 26 » « հուլիս » 20 19թ. № 236-Ձ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Նշանակել ծառայողական քննություն «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մեկ տարվա ընթացքում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի հատատեղերի, անտառխախտման արձանագրություններում ներառված ապօրինի հատումների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների և պահպանության, ինչպես նաև անտառապատման վիճակի ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված խախտումների վերաբերյալ գրությունների պատշաճ ընթացքն ուսումնասիրելու դեպքերով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) մեկ տարվա ընթացքում «Անտառային պետական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից շրջակա միջավայրի նախարարություն ուղարկված «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի հատատեղերի, անտառխախտման արձանագրություններում ներառված ապօրինի հատումների, հակահրդեհային անվտանգության միջոցառումների և պահպանության, ինչպես նաև անտառապատման վիճակի ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված խախտումների վերաբերյալ գրությունների ընթացքի ուսումնասիրությունը:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,
- 3) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ,
- 4) Վիգեն Անանյան - Իրավախորհրդատու նախարարի:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանը ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«26» հուլիսի 2019թ.

ք. Երևան